ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՀԱՊՁԲ-1/5-1

ք. Երևան

15.06.2018թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և «Մովսեսյան» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Դ. Մովսեսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Վաճառող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 3 134 550 (երեք միլիոն հարյուր երեսունչորս հազար հինգ հարյուր հիսուն) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը: Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման

ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 10.12.2018թ:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սոյն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու

վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Սույն պայմանագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ կապի և ԱԿՀ վարչությունը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Մովսեսյան» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ք. Երևան, Պուշկինի 52-8/2,
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 1570023726030100
ՀՎՀՀ 002522157	ՀՎՀՀ 02648041
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	Տնօրեն
Մ. ԶԱՄԲԱՐՅԱՆ	Ռ. ՄՈՎՍԵՍՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-1/5-1 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հ/հ	Ապրանքի անվանում	Բնութագրող հիմնական հատկանիշները	ծագման երկիրը
1	Համակարգիչների մասեր (Պրոցեսոր)	Համակարգչային, Intel Pentium Dual-Core E5700 տիպի, հաճախականությունը ոչ պակաս 2.40Գհց, կոնտակտային հիմքի տեսակը Socket 775, 1MB, արագագործությունը 800Մհց, հովացուցիչով , 2014թ. և բարձր	ՉԺՀ
2	Համակարգիչների մասեր (Պրոցեսոր)	Համակարգչային, Intel Core™2 Duo E7500 տիպի, հաճախականությունը ոչ պակաս 2.40Գհց, միջուկների քանակը 2, կոնտակտային հիմքի տեսակը Socket 775, 2MB, արագագործությունը 800Մհց, հովացուցիչով , 2014թ. և բարձր	ՉԺՀ
3	Համակարգիչների մասեր (Պրոցեսոր)	Համակարգչային, CPU Desktop Core i3-3220 3.3Գհց (3MB S1155) հովացուցիչով, հիշողության տիպը DDR3-1333/1600, HD Graphics 2500, 2015թ. և բարձր	ՄԱԼԱՁԻԱ
4	Համակարգիչների մասեր (Պրոցեսոր)	Համակարգչային, INTEL Pentium Processor G2020 (հաճախականությունը ոչ պակաս 2.90Գհց, 512KB 3MB 55W 1155) հովացուցիչով,INTEL HD Graphics, , 2014թ. և բարձր	ՉԺՀ
5	Համակարգիչների մասեր (Օպերատիվ հիշողություն)	DIMM DDR3 տիպի, PC3-7500,արագագործությունը 1333Մհց, ծավալը առնվազն 2048Mb (2Gb) , 2015թ. և բարձր:	ՉԺՀ
6	Համակարգիչների մասեր (Թերմոլամպ)	Samsung 1660 տպող սարքի համար, մուտքային լարումը 220Վ, հզորությունը ոչ պակաս 600 Վտ, 2015թ. և բարձր:	ՉԺՀ
7	Համակարգիչների մասեր (Թերմոմածուկ)	համակարգչային պրոցեսորի համար, ջերմաթողունակությունը ոչ պակաս 3Վատ/մ*Կել, մածուցիկությունը 150-500Պա*վ, օգտակար պիտելիության ժամկետը 12 ամիս , 2018թ.	ՉԺՀ
8	Համակարգիչների մասեր (Սնուցման բլոկ)	DELL դյուրակիր համակարգչի համար KM742 տիպի, մուտքային լարումը 100-220Վ, ելքային լարումը 19Վ, հոսանքի ուժը 3.34Ա, 2014թ. և բարձր	ՉԺՀ
9	Համակարգիչների մասեր (Սնուցման բլոկ)	LENOVO դյուրակիր համակարգչի համար LO9L6Y02 տիպի, մուտքային լարումը 100-220Վ,ելքային լարումը 19Վ, հոսանքի ուժը 3Ա, 2014թ. և բարձր	ՉԺՀ
10	Համակարգիչների մասեր (Մարտկոց)	DELL համակարգչի համար KM742, լարումը 11.1Վ, ունակությունը 4400 մԱ, 2017թ. և բարձր	ՉԺՀ
11	Համակարգիչների մասեր (Մարտկոց)	LENOVO համակարգչի համար LO9L6Y02, լարումը 11.1Վ, ունակությունը 5200 մԱ/ժամ, 2017թ. և բարձր	ՉԺՀ
12	Համակարգիչների մասեր (Կոշտ կրիչ)	HDD ներքին, Notebook-ի համար,ծավալը առնվազն 500GB, 5400rpm 8MB, ֆորմատը 2.5" SATAII տիպի, 2016թ. և բարձր	ՉԺՀ
13	Համակարգիչների մասեր (Զոդիչ նյութ)	ՊՕՍ 40 d=1,5մմ, 100գ կոճով, կապար-39%, անագ 59%, բևեկնախեժ 2%, 2015թ. և բարձր	ՉԺՀ
14	Համակարգիչների մասեր (Զոդիչ նյութ)	ՊՕՍ 61 d=1մմ, 100գ կոճով, կապար-39%, անագ 59%, բևեկնախեժ 2%, 2015թ. և բարձր	ՉԺՀ
15	Համակարգիչների մասեր (Պլինտի կրակող գործիք)	HT-3240 Hyperline patch panel-ի 2 սեղման հնարավորությամբ՝ "HIGH" և "LOW", լրացուցիչ սրածայր դանակով HT-14A, HT-14A H դանակի տեսակը 110/66, 2015թ. և բարձր	ՉԺՀ
16	Համակարգիչների մասեր (Միկրոսխեմա)	SG3524N լարման իմպուլսային կարգավորիչ, լարումը 40Վ, կոլեկտորի ելքային հոսանքի ուժը 100մԱ, աշխատանքային ջերմաստիճանը –65C to 150C, 2015թ. և բարձր	ՉԺՀ
17	Համակարգիչների մասեր (Տրանզիստոր)	P60NF06L N կանալի, լարումը 60վ, 0.014 Ω - 60Ա, աշխատանքային ջերմաստիճանը –65C to 150C, 2015թ. և բարձր	ՉԺՀ
18	Համակարգիչների մասեր (Տրանզիստոր)	30N06L N կանալի, լարումը 60վ, 0.014 Ω - 30Ա, աշխատանքային ջերմաստիճանը –65C to 150C, 2015թ. և բարձր	ՉԺՀ
19	Համակարգիչների մասեր (Տրանզիստոր)	IRF3205 N կանալի, լարումը 55վ, 8 մՕմ - 110Ա, աշխատանքային ջերմաստիճանը –65C to 150C, 2015թ. և բարձր	ՉԺՀ
20	Համակարգիչների	30N06 N կանալի, լարումը 60վ, 8 մՕմ - 30A, աշխատանքային	ՉԺՀ

	մասեր (Ստաբիլիզատոր)	ջերմաստիճանը –65C to 150C, 2015թ. և բարձր	
21	Համակարգիչների մասեր (Ստաբիլիզատոր)	LM317 լարման ինտեգրալային ստաբիլիզատոր, մուտքային լարումը 2-40վ, հզորությունը 1.5 Վտ , 2015թ. և բարձր	ՁԺՀ
22	Համակարգիչների մասեր (Ստաբիլիզատոր)	LM7805 1Ա լարման կարգավորիչ, լարումը 5-24վ, աշխատանքային ջերմաստիճանը –40C to 120C, 2015թ. և բարձր	ՁԺՀ
23	Համակարգիչների մասեր (Տրանզիստոր)	IRF3205 N կանալի, լարումը 55վ, 8 մՕմ - 110A, հզորությունը 150 Վտ, աշխատանքային ջերմաստիճանը –65C to 150C, 2015թ. և բարձր	ՁԺՀ
24	Համակարգիչների մասեր (Ցանցային մալուխների տեստեր)	MS 6810 Coaxial Cable (BNC), UTP և STP Cable մալուխների համար, RJ45 և BNC բնիկներով, 10 Base-T, EIA/TIA-568A, EIA/TIA-568B, AT&T258A ստանդարտների ստուգման հնարավորությամբ, սնուցումը 9վ հաստատուն հոսանքից , 2016թ. և բարձր	ՁԺՀ
25	Համակարգիչների մասեր (Լամպ)	LCD մոնիտորի լյումինեսային, CCFL տիպի, երկարությունը 41.5 սմ, հաստությունը 2.2 մմ, մեկուսիչ ռետիններով, ստավաթոթե տուպիով, 2017թ. և բարձր	ՁԺՀ
26	Համակարգիչների մասեր (Մարտկոց)	Toshiba Notebook-ի համար, PA3615U-1BRM, ելքային լարումը 10.8Վ, ծավալը 4000 մԱժ , 2017թ. և բարձր	ՁԺՀ

Բոլոր ապրանքները պետք է լինեն նոր և չօգտագործված, գործարանային փաթեթավորման տուփի մեջ: Ապրանքը մատակարարվելու է վաճառողի կողմից ՀՀ ՀՈՒ կապի և ԱԿՀ վարչության պահեստ՝ ավան Բալահովիտ ՀՀ ՊՆ 83580 զորամաս:

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՑՑ

Չափա բաժնի համար	Ապրանքի անվանում	Չ/Մ	Քանակ	Մեկ միավ. գին /դրամ/	Ընդհանուր գումար /դրամ/	Ապրանքի մատակարարումը 2018թ.՝ ըստ եռամսյակների
						3-րդ եռամսյակ
1	Համակարգիչների մասեր (Պրոցեսոր)	հատ	5	16000	80000	5
2	Համակարգիչների մասեր (Պրոցեսոր)	հատ	8	18500	148000	8
3	Համակարգիչների մասեր (Պրոցեսոր)	հատ	5	48250	241250	5
4	Համակարգիչների մասեր (Պրոցեսոր)	հատ	5	23000	115000	5
5	Համակարգիչների մասեր (Օպերատիվ հիշողություն)	հատ	40	7200	288000	40
6	Համակարգիչների մասեր (Թերմոլամպ)	հատ	5	11380	56900	5
7	Համակարգիչների մասեր (Թերմոմածուկ)	գ	200	280	56000	200
8	Համակարգիչների մասեր (Սնուցման բլոկ)	հատ	10	14390	143900	10
9	Համակարգիչների մասեր (Սնուցման բլոկ)	հատ	10	14390	143900	10
10	Համակարգիչների մասեր (Մարտկոց)	հատ	10	24900	249000	10
11	Համակարգիչների մասեր (Մարտկոց)	հատ	10	31600	316000	10
12	Համակարգիչների մասեր (Կոշտ կրիչ)	հատ	10	29300	293000	10
13	Համակարգիչների մասեր (Զոդիչ նյութ)	հատ	50	2760	138000	50

14	Համակարգիչների մասեր (Զոդիչ նյութ)	հատ	50	2760	138000	50
15	Համակարգիչների մասեր (Պլինտի կրակող գործիք)	հատ	8	7500	60000	8
16	Համակարգիչների մասեր (Միկրոսխեմա)	հատ	10	1600	16000	10
17	Համակարգիչների մասեր (Տրանզիստոր)	հատ	10	1200	12000	10
18	Համակարգիչների մասեր (Տրանզիստոր)	հատ	15	1400	21000	15
19	Համակարգիչների մասեր (Տրանզիստոր)	հատ	15	1200	18000	15
20	Համակարգիչների մասեր (Ստաբիլիզատոր)	հատ	30	1600	48000	30
21	Համակարգիչների մասեր (Ստաբիլիզատոր)	հատ	30	1000	30000	30
22	Համակարգիչների մասեր (Ստաբիլիզատոր)	հատ	30	1000	30000	30
23	Համակարգիչների մասեր (Տրանզիստոր)	հատ	12	1000	12000	12
24	Համակարգիչների մասեր (Ցանցային մալուխների տեստեր)	հատ	4	9600	38400	4
25	Համակարգիչների մասեր (Լամպ)	հատ	20	10860	217200	20
26	Համակարգիչների մասեր (Մարտկոց)	հատ	5	45000	225000	5

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն

ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Մովսեսյան» ՍՊԸ

Տնօրեն

Դ. ՄՈՎՍԵՍՅԱՆ

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-1/5-1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հ/մ	Ծառայության անվանումը	CPV կոդ	Ըստ 2018թ ամիսների՝ աճողական					
			հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր, բայց ոչ ուշ քան 10.12.18թ.
1.	Համակարգիչների մասեր (Պրոցեսոր)	30237100/1/101/	80000	80000	80000	80000	80000	80000
2.	Համակարգիչների մասեր (Պրոցեսոր)		148000	148000	148000	148000	148000	148000
3.	Համակարգիչների մասեր (Պրոցեսոր)		241250	241250	241250	241250	241250	241250
4.	Համակարգիչների մասեր (Պրոցեսոր)		115000	115000	115000	115000	115000	115000
5.	Համակարգիչների մասեր (Օպերատիվ հիշողություն)		288000	288000	288000	288000	288000	288000
6.	Համակարգիչների մասեր (Թերմոլամպ)		56900	56900	56900	56900	56900	56900
7.	Համակարգիչների մասեր (Թերմոմածուկ)		56000	56000	56000	56000	56000	56000
8.	Համակարգիչների մասեր (Սնուցման բլոկ)		143900	143900	143900	143900	143900	143900
9.	Համակարգիչների մասեր (Սնուցման բլոկ)		143900	143900	143900	143900	143900	143900
10.	Համակարգիչների մասեր (Մարտկոց)		249000	249000	249000	249000	249000	249000
11.	Համակարգիչների մասեր (Մարտկոց)		316000	316000	316000	316000	316000	316000
12.	Համակարգիչների մասեր (Կոշտ կրիչ)		293000	293000	293000	293000	293000	293000
13.	Համակարգիչների մասեր (Զոդիչ նյութ)		138000	138000	138000	138000	138000	138000
14.	Համակարգիչների մասեր (Զոդիչ նյութ)		138000	138000	138000	138000	138000	138000
15.	Համակարգիչների մասեր (Պլինտի կրակող գործիք)		60000	60000	60000	60000	60000	60000
16.	Համակարգիչների մասեր (Միկրոսխեմա)		16000	16000	16000	16000	16000	16000
17.	Համակարգիչների մասեր (Տրանզիստոր)		12000	12000	12000	12000	12000	12000

18.	Համակարգիչների մասեր (Տրանզիստոր)		21000	21000	21000	21000	21000	21000
19.	Համակարգիչների մասեր (Տրանզիստոր)		18000	18000	18000	18000	18000	18000
20.	Համակարգիչների մասեր (Ստաբիլիզատոր)		48000	48000	48000	48000	48000	48000
21.	Համակարգիչների մասեր (Ստաբիլիզատոր)		30000	30000	30000	30000	30000	30000
22.	Համակարգիչների մասեր (Ստաբիլիզատոր)		30000	30000	30000	30000	30000	30000
23.	Համակարգիչների մասեր (Տրանզիստոր)		12000	12000	12000	12000	12000	12000
24.	Համակարգիչների մասեր (Ցանցային մալուխների տեստեր)		38400	38400	38400	38400	38400	38400
25.	Համակարգիչների մասեր (Լամպ)		217200	217200	217200	217200	217200	217200
26.	Համակարգիչների մասեր (Մարտկոց)		225000	225000	225000	225000	225000	225000

Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն

ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

Տեսրեն

ՎԱՃԱՌՈՂ

«Մովսեսյան» ՍՊԸ

Դ. ՄՈՎՍԵՍՅԱՆ

Հավելված N 3
N ԳՀԱՊՁԲ-1/5-1 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ԳՀԱՊՁԲ-1/5-1 պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն